# «ՔԱՋԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N «ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/4 »

ք. Կապան « 28 » մարտ 2018 թ.

«Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ը ի դեմս տնօրենի պաշտոնակատար Հրաչյա Թադևոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Նատալի ֆարմ»ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ա.Ասատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1130 919 (մեկ միլիոն հարյուրերեսուն հազար ինը հարյուր տասնինը) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

Սույն պայմանագրի մասով Վաճառողը Ապրանքի մատակարարումը իրականացնում է 2018թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

3. 3 Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետը՝ մինչև ֆինանսական միջոցները նախատեսվելը, սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Նույն կետի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 ***Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, սակայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն այս պայմանագրի շրջանակներում գնումը կիրականցվի անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության դեպքում և կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:***

***Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջական խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:***

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով նախատեսված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**
«Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ
Հասցե՝ ք.Քաջարան, Բակունցի 1
Բանկ՝ «Ամերիաբանկ»ԲԲԸ
Հ/Հ 1570025402170100
ՀՎՀՀ 09417527
Տնօրենի պաշտոնակատար Հ.Թադևոսյան

---
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«Նատալի ֆարմ»ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2
Բանկ՝ «Ամերիաբանկ»ԲԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
տնօրեն՝ Ա.Սաատրյան

---
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 1*
*« 28 » մարտ 2018 թ. կնքված*
*ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/4 ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | Հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը ** |
| 2 | 33141165/302 | Ալբումին լ-թ 10% 100մլ | Բիոֆարմա, Ուկրաինա | ալբումին մարդու 100մգ/մլ; 100մլ ապակե շշիկ | սրվակ | 15849 | 79245 | 5.00 | ՀՀ,Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Բակունցի 1, «Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ | Համապատասխան պատվերի | Նախատեսվում է գնել 2018թ-ի ընթացքում, յուրաքանչյուր անգամ պատվիրատուից պատվեր ստանալուց 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ գնորդի կողմից պատվիր |
| 11 | 33651111/304 | Ամոքսիցիլին օշարակ 250 մգ/5 մլ 100 մլ | Հեմոֆարմ, Սերբիա | ամոքսիցիլին (ամոքսիցիլինի տրիհիդրատ) 250մգ/5մլ; 40գ գրանուլներ ապակե սրվակում 100մլ դեղակախույթի համար գրանուլներ ներքին ընդունման դեղակախույթի | սրվակ | 822 | 16440 | 20.00 | | | |
| 16 | 33691176/320 | Ալտե օշարակ 5% 125 գ | Դեղագործական արտադրական ձեռնարկություն ԳԵՄԻ, Լեհաստան | տուղտի արմատների չոր հանուկ 5% 125 մգ | ֆլակոն | 722 | 18044 | 25.00 | | | |
| 17 | 33691176/323 | Բիսակոդիլ մոմիկ 10 մգ № 10 | Լեկխիմ-Խարկով ԲԸ, Ուկրաինա | բիսակոդիլ 10 մգ, մոմիկներ ուղիղաղիքային | հատ | 50 | 29760 | 600.00 | | | |
| 18 | 33691176/327 | Արիկարդ ն/ե ամպ. 100մգ/ 10 մլ № 5 | Լիկվոր, Հայաստան | էսմոլոլ (էսմոլոլի հիդրոքլորիդ) 10մգ/մլ; 10մլ լուծույթ ն/ե ներարկման | սրվակ | 3375 | 33750 | 10.00 | | | |
| 19 | 33691176/325 | Գլիցերին մոմիկ 1 գ № 10 | Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ, Հայաստան | գլիցերոլ 1000մգ; մոմիկներ ուղիղաղիքային | հատ | 89 | 6222 | 70.00 | | | |
| 25 | 33691176/677 | Հեդելիքս օշարակ հազի դեմ 100մլ | Կրեվել Մոզելբախ ԳմբՀ, Գերմանի | բաղեղի տերևների հանուկ 8մգ/մլ; 100մլ օշարակ | հատ | 2642 | 7927 | 3.00 | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 26 | 33611350/ 302 | Ասկորբինաթթու ամպ. 5% 2 մլ № 10 | Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ, Հայաստան | ասկորբինաթթու 50մգ/մլ; 2մլ լուծույթ ներարկման | սրվակ | 25 | 49760 | 2000.00 | | | վաճ քանակի ն և տեսակի ն համապ ատախա ն: |
| 27 | 33621420/ 302 | Ատորվաստատին 20մգ դ/հ №30 | Բելմեդպրեպարատի ՀՈՒՁ, Բելառուս | ատորվաստատին (ատորվաստատին կալցիում) 20մգ դեղահատեր թաղանթապատ | դեղահատ | 42 | 8500 | 200.00 | | | |
| 30 | 33661157/ 301 | Ատրոպինի Սուլֆատ ամպ. մ/մ ն/ե 0,1% 1մլ № 10 | ԳՆՑԼՍ ՍՊԸ, ՈՒկրաինա | ատրոպին (ատրոպինի սուլֆատ) 1մգ/մլ; 1մլ լուծույթ մ/մ, ն/ե և ե/մ ներարկման | սրվակ | 57 | 11376 | 200.00 | | | |
| 39 | 33621720/ 302 | Բիսոպրոլոլ՝ Բիպրոլ դ/հ 5 մգ № 30 | Նիժֆարմ ԲԸ, Ռուսաստան | բիսոպրոլոլ (բիսոպրոլոլի ֆումարատ)5մգ; դեղահատեր թաղանթապատ | դեղահատ | 19 | 3800 | 200.00 | | | |
| 42 | 33651126/ 301 | Գենտամիցին ամպ. 4 % 80մգ/2 մլ № 10 | Զդորովյե Դեղագործական Ընկերություն ՍՊԸ, Ուկրաինա | Գենտամիցին gentamicin լուծույթ ներարկման 40մգ/մլ, 2մլ | սրվակ | 66 | 6560 | 100.00 | | | |
| 44 | 33691138/ 308 | Գլյուկոզա ամպ. 40% 5մլ № 10 | Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ, Հայաստան | դեքստրոզ 400մգ/մլ; 5 մլ լուծույթ ն/ե ներարկման | սրվակ | 34 | 8563 | 250.00 | | | |
| 49 | 33631430/ 302 | դեքսկետոպրոֆեն (դեքսկետոպրոֆենի տրոմետամոլ) ՝ **Դեկսարոմ լ-թ 25 մգ/մլ 2 մլ № 5** | Էս. Սի. Ռոմֆարմ Քոմպանի Ս. Ռ. Լ. , Ռումինիա | Դեքսկետոպրոֆեն dexketoprofen լուծույթ ն/ե և մ/մ ներարկման 25մգ/մլ, 2մլ | սրվակ | 511 | 40878 | 80.00 | | | |
| 53 | 33641310/ 303 | Դիդրոգեստերոն՝ **Դյուֆաստոն թ/պ դ/հ 10մգ №20** | ԱԲԲՕՏՏ Հելթքեյր Պրոդուկտս Բ. Վ. , Ս. Ջ. , Նիդեռլանդներ | Դիդրոգեստերոն Dydrogesterone դեղահատ 10 մգ | դեղահատ | 219 | 43800 | 200.00 | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 54 | 33661164/ 301 | դիթիլինի դեղահումք՝ **Դիտիլին ամպ. 20մգ/մլ 5 մլ №10** | Բելմեդպրեպարատի ՀՈՒՁ, Բելառուս | Սուքսամեթոնիում suxamethonium լուծույթ ն/ե ներարկման 20մգ/մլ, 5մլ ամպուլ | սրվակ | 342 | 34238 | 100.00 | | |
| 55 | 33631310/ 308 | **Դիկլոֆենակ ամպ . 25մգ/մլ 3մլ № 5** | Հեմոֆարմ Ա. Դ. , Սերբիա | Դիկլոֆենակ diclofenac լուծույթ ներարկման 25 մգ/մլ, 3մլ | սրվակ | 83 | 83000 | 1000.00 | | |
| 56 | 33631310/ 304 | դիկլոֆենակ՝ **Դիկլոֆենակ Ռետարդ թ/պ դ/հ 100 մգ №20** | Հեմոֆարմ Ա. Դ. , Սերբիա | Դիկլոֆենակ diclofenac դեղահատ 100մգ | դեղահատ | 25 | 12695 | 500.00 | | |
| 57 | 33631310/ 307 | դիկլոֆենակ՝ **Դիկլոֆենակ թ/պ դ/հ 50մգ № 20** | Նիժֆարմ ԲԸ, Սերբիա | Դիկլոֆենակ diclofenac դեղահատ 50մգ | դեղահատ | 16 | 3118 | 200.00 | | |
| 59 | 33671130/ 305 | դիֆենհիդրամին՝ **Դիմեդրոլ ամպ. 1% 1մլ №10** | Երևանի քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ, Հայաստան | Դիֆենհիդրամին diphenhydramine լուծույթ ներարկման 10մգ/մլ, 1մլ | սրվակ | 22 | 65070 | 3000.00 | | |
| 62 | 33621760/ 307 | **Էնալապրիլ դ/հ 20մգ №20** | Նիժֆարմ ԲԸ, Սերբիա | Էնալապրիլ (էնալապրիլի մալեատ) 20մգ դեղահատեր | դեղահատ | 18 | 35100 | 2000.00 | | |
| 63 | 33621290/ 302 | էպինեֆրին (ադրենալին)՝ **Ադրենալինի հիդրոքլորիդ ամպ. 0,18% №10** | Զդորովյե Դեղագործական Ընկերություն ՍՊԸ, Ուկրաինա | էպինեֆրին (էպինեֆրինի հիդրոտարտրատ) էպինեֆրին (էպինեֆրինի հիդրոտարտրատ) 1,82մգ/մլ 1մլ, ամպուլներ | սրվակ | 133 | 13298 | 100.00 | | |
| 64 | 33691202/ 303 | էտամզիլատ՝ **Դիցինոն ամպ. 250մգ 2մլ №50** | Լեկ Ֆարմասյութիքալս դ. դ. , Սլովենիա | էտամզիլատ etamsylate լուծույթ ներարկման 250մգ/2մլ, 2մլ ամպուլ | սրվակ | 175 | 61247 | 350.00 | | |
| 65 | 33621690/ 306 | կարվեդիլոլ՝ **Կարվիդիլ դ/հ 12,5 մգ № 28** | Գրինդեկս ԲԸ, Լատվիա | Կարվեդիլոլ, carvedilol դեղահատ 12,5մգ, | դեղահատ | 30 | 18000 | 600.00 | | |
| 68 | 33691185/ 304 | հորթի արյան սպիտակուցազերծ ածանցյալ՝ | Տակեդա Ֆարմասյուտիկալս Ավստրիա | հորթի արյան սպիտակուցազերծ ածանցյալ 40մգ/մլ; 5 մլ լուծույթ ներարկման | սրվակ | 1098 | 219600 | 200.00 | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | **Ակտովեգին ամպ. 200մգ 5 մլ № 5** | | | | | | | | |
| 69 | 33611460/301 | Մեբ–երին (մեբ–երինի հիդրոքլորիդ)՝ **Դյուսպատալին դ/պ 200 մգ № 30** | ԱԲԲՕՏՏ Հելթքեյր Պրոդուկտդ Բ. Վ., Ֆրանսիա | Մեբևերին mebeverine դեղապատի երկարատև ձերբազատմամբ 200մգ | հատ | 133 | 79770 | 600.00 | | |
| 71 | 33661127/304 | մետամիզոլ (մետամիզոլի նատրիում)՝ **Անալգին ամպ. 50% 2 մլ № 10** | Երևանի քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ, Հայաստան | մետամիզոլ (մետամիզոլ նատրիում) 500մգ/մլ; ամպուլներ 2մլ,լուծույթ ներարկման | սրվակ | 31 | 77500 | 2500.00 | | |
| 72 | 33631230/303 | **Պովիդոն յոդ քսուք 10% 20 գ** | Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան ԲԲԸ, Բելառուս | պովիդոն յոդ 100մգ/գ; 20գ այլումինե պարկուճ քսուք | հատ | 330 | 19824 | 60.00 | | |
| 74 | 33661112/301 | **Պրոպոֆոլ – Լիպուրո ամպ. ն/ե 20 մլ 10 մգ/մլ № 5** | Բ. Բրաուն մելսունգեն ԱԳ, Գերմանիա | Պրոպոֆոլ Propofol կիթ ն/ե ներարկման, 10մգ/մլ, 20մլ | սրվակ | 695 | 34750 | 50.00 | | |
| 76 | 33651131/306 | սուլֆամեթոքսազոլ + տրիմեթոպրիմ՝ **Բիսեպտոլ դ/հ 120մգ № 20** | Պոլֆա դեղագործական գործարան, Լեհաստան | սուլֆամեթոքսազոլ, տրիմեթոպրիմ 100մգ+20մգ; դեղահատեր | դեղահատ | 24 | 2401 | 100.00 | | |
| 78 | 33621650/302 | քսերոֆորմ, շիկատակի հանուկ, ցինկ (ցինկի սուլֆատ)՝ **Անուզոլ մոմիկ № 10** | Նիժֆարմ, Ռուսաստան | քսերոֆորմ, շիկատակի հանուկ, ցինկ (ցինկի սուլֆատ) 100մգ+20մգ+50մգ; մոմիկներ ուղիղաղիքային | հատ | 67 | 6683 | 100.00 | | |

***Գնման ենթակա ապրանքների քանակները համարվում են առավելագույն մատակարարվող քանակներ՝ որոնք ըստ կարիքի կարող են նվազել:**

***Ծանոթություն**

ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,

բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,

գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:

դ.Գնման առարկայի պահպանումը և տեղափոխումն իրականացվում է համաձայն վերջիններիս արտաքին փաթեթի կամ ներդիր-թերթիկի ցուցումների:

*Ծանոթություն – Եթե գնման առարկաների հատկանիշները պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագրում կարդալ «կամ համարժեք» բառը: Համաձայն (Օրենքի Հոդված 13, Կետ 5)

• Գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա :

***Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ՀՀ, Սյունիքի մարզ, ք,Քաջարան, Բակունցի 1 «Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ , աշխատանքային օրերին և աշխատանքային ժամերին՝ 09:00-17:00:***

****Ապրանքների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո յուրաքանչյուր անգամ Գնորդից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ Գնորդի կողմից պատվիրված քանակին և տեսակին համապատասխան:***

*****Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:***

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ | «Նատալի ֆարմ»ՍՊԸ |
| Հասցե՝ ք.Քաջարան, Բակունցի 1 | Հասցե՝ ք.Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2 |
| Բանկ՝ «Ամերիաբանկ»ԲԲԸ | Բանկ՝ «Ամերիաբանկ»ԲԲԸ |
| Հ/Հ 1570025402170100 | Հ/Հ 1570005065330100 |
| ՀՎՀՀ 09417527 | ՀՎՀՀ 01222567 |
| Տնօրենի պաշտոնակատար Հ.Թադևոսյան | տնօրեն՝ Ա.Ասատրյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 2*
*« 28 » մարտ 2018 թ. կնքված*
*ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/4 ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | |
| | | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 2 | 33141165/302 | Ալբումին լ-թ 10% 100մլ | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 11 | 33651111/304 | Ամօքսիցիլին օշարակ 250 մգ/5 մլ 100 մլ | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 16 | 33691176/320 | Ալտե օշարակ 5% 125 գ | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 17 | 33691176/323 | Բիսակոդիլ մոմիկ 10 մգ № 10 | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 18 | 33691176/327 | Արիկարդ ն/ե ամպ. 100մգ/ 10 մլ № 5 | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 19 | 33691176/325 | Գլիցերին մոմիկ 1 գ № 10 | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 25 | 33691176/677 | Հեդելիքս օշարակ հազի դեմ 100մլ | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 26 | 33611350/302 | Ասկորբինաթթու ամպ. 5% 2 մլ № 10 | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 27 | 33621420/302 | Ատորվաստատին 20մգ դ/հ №30 | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 30 | 33661157/301 | Ատրոպինի Սուլֆատ ամպ. մ/մ ն/ե 0,1% 1մլ № 10 | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 39 | 33621720/302 | Բիսոպրոլոլ՝ Բիպրոլ դ/հ 5 մգ № 30 | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 42 | 33651126/301 | Գենտամիցին ամպ. 4 % 80մգ/2 մլ № 10 | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 44 | 33691138/308 | Գլյուկոզա ամպ. 40% 5մլ № 10 | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 49 | 33631430/302 | դեքսկետոպրոֆեն (դեքսկետոպրոֆենի տրոմետամոլ) ՝ **Դեկսարոմ լ-թ 25 մգ/մլ 2 մլ № 5** | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 53 | 33641310/303 | Դիդրոգեստերոն՝ **Դյուֆաստոն թ/պ դ/հ 10մգ №20** | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 54 | 33661164/301 | դիթիլինի դեղահումք ՝ **Դիտիլին ամպ. 20մգ/մլ 5 մլ №10** | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 55 | 33631310/308 | **Դիկլոֆենակ ամպ. 25մգ/մլ 3մլ № 5** | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 56 | 33631310/304 | դիկլոֆենակ ՝ **Դիկլոֆենակ Ռետարդ թ/պ դ/հ 100 մգ №20** | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 57 | 33631310/307 | դիկլոֆենակ ՝ **Դիկլոֆենակ թ/պ դ/հ 50մգ № 20** | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 59 | 33671130/305 | դիֆենհիդրամին ՝ **Դիմեդրոլ ամպ. 1% 1մլ №10** | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 62 | 33621760/307 | **Էնալապրիլ դ/հ 20մգ №20** | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 63 | 33621290/302 | էպինեֆրին (ադրենալին)՝ **Ադրենալինի հիդրոքլորիդ ամպ. 0,18% №10** | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 64 | 33691202/303 | էտամզիլատ ՝ **Դիցինոն ամպ. 250մգ 2մլ №50** | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 65 | 33621690/306 | կարվեդիլոլ ՝ **Կարվիդիլ դ/հ 12,5 մգ № 28** | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 68 | 33691185/304 | հորթի արյան սպիտակուցազերծ ածանցյալ ՝ **Ակտովեգին ամպ. 200մգ 5 մլ № 5** | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 69 | 33611460/301 | Մեբ–երին (մեբ–երինի հիդրոքլորիդ) ՝ **Դյուսպատալին դ/պ 200 մգ № 30** | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 71 | 33661127/304 | մետամիզոլ (մետամիզոլի նատրիում) ՝ **Անալգին ամպ. 50% 2 մլ № 10** | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 72 | 33631230/303 | **Պովիդոն յոդ քսուք 10% 20 գ** | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 74 | 33661112/301 | **Պրոպոֆոլ –Լիպուրո ամպ. ն/ե 20 մլ 10 մգ/մլ № 5** | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 76 | 33651131/306 | սուլֆամեթոքսազոլ + տրիմեթոպրիմ՝ **Բիսեպտոլ դ/հ 120մգ № 20** | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |
| 78 | 33621650/302 | քսերոֆորմ, շիկատակի հանուկ, ցինկ (ցինկի սուլֆատ) ՝ **Անուզոլ մոմիկ № 10** | | | 20% | 30% | 40% | 50% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

** *հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**ԳՆՈՐԴ**

«Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ
Հասցե՝ ք.Քաջարան, Բակունցի 1
Բանկ՝ «Ամերիաբանկ»ԲԲԸ
Հ/Հ 1570025402170100
ՀՎՀՀ 09417527
Տնօրենի պաշտոնակատար Հ.Թադևոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Նատալի ֆարմ»ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2
Բանկ՝ «Ամերիաբանկ»ԲԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
տնօրեն՝ Ա.Ասատրյան

/ստորագրություն/
Կ.Տ